

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ձ Ե Կ ՈՒ Յ Ց

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	3
3. ԸՆՏՐԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.....	4
4. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ	5
5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	5
ՀԱՎԵԼՎԱԾ 1.....	12

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՀ ազգային վիճակագրական ծառայության (ԱՀԱՎԾ) կողմից 2023թ. հունվար-մարտ ամիսներին անց է կացվել քաղաքացիների կողմից իրականացվող անհատական բնակելի շենքերի շինարարության ընտրանքային հետազոտություն, որով խնդիր էր դրվել ուսումնասիրել և ընդլայնել բնակարանային շինարարության վիճակագրության համար անհրաժեշտ ցուցանիշների կազմն ու բովանդակությունը: Միաժամանակ, սույն հետազոտությունը հնարավորություն կընձեռնի ոչ միայն համալրել բնակարանային շինարարության վիճակագրությունն անհրաժեշտ լրացուցիչ ցուցանիշներով, այլև կատարելագործել այդ ցուցանիշների հաշվարկման գործիքակազմն ու մեթոդաբանությունը:

Հետազոտությունն իրականացվել է «Անհատական բնակարանային շինարարություն» հարցաթերթի միջոցով (հաստատվել է ԱՀ վիճակագրության պետական խորհրդի 2021թ. Օգոստոսի 12-ի N 18-Ա որոշմամբ):

Հարցաթերթերում ներառված ցուցանիշները հնարավորություն են ընձեռնել տեղեկատվություն ստանալ գործարկված և շինարարության ընթացքում գտնվող անհատական բնակելի շինարարական աշխատանքների ընթացքի, ֆինանսավորման աղբյուրների և կատարված ծախսերի, շենքերի հարկայնության, տարածքների բարեկարգման և այլ ցուցանիշների վերաբերյալ:

2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ընդհանուր առմամբ, բնակարանային շինարարության վերաբերյալ վիճակագրության առջև ծառայած խնդիրները կարելի է տարանջատել հետևյալ հիմնական խմբերում.

- *անհատական բնակարանային շինարարության ծավալների վերաբերյալ շրջանային կտրվածքով ցուցանիշների ոչ ամբողջականությունը,*
- *միջազգային պրակտիկայում կիրառվող գործիքակազմի ներդրումը՝ հաշվի առնելով ոլորտի առանձնահատկությունները,*
- *գործող ցուցանիշների համակազմի ընդլայնումն ու կատարելագործումը,*
- *բնակելի շենքերի ռեզիստի ձևավորման և արդիականացման անհրաժեշտությունը:*

Սույն հետազոտության հիմնական նպատակն էր անհատական բնակարանային շինարարության վերաբերյալ վիճակագրության կատարելագործումը: Մասնավորապես.

- *բնակարանային շինարարությունը բնութագրող վիճակագրական տվյալների՝ միջազգային պրակտիկայում կիրառվող մեթոդաբանությունների և չափորոշիչների հետ համադրելիության ապահովումը,*
- *շրջանային կտրվածքով ցուցանիշների համընդգրկունության ապահովումը,*
- *շինարարության ոլորտում ընտրանքային մեթոդների կիրառումն ու դրանց մեթոդաբանության կատարելագործումը:*

Հետազոտության արդյունքները հնարավորություն կտան.

- շրջանային կտրվածքով ստանալ ամբողջական և հավաստի տեղեկություն անհատական բնակարանային շինարարության վերաբերյալ,
- բարձրացնել տեղեկատվության որակը,
- համալրել պաշտոնական վիճակագրության շրջանակում բնակարանային շինարարության վերաբերյալ առկա տեղեկատվական բազան նոր ցուցանիշներով,
- շարունակել նոր կառուցվող բնակելի շենքերի ռեգիստրի վարումը և պարբերաբար դիտարկել շինարարական աշխատանքների ընթացքը:

3. ԸՆՏՐԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հետազոտության իրականացման համար կիրառված մոտեցումը կարելի է տարանջատել երկու հիմնական մասի՝ համատարած և ընտրանքային:

Հետազոտության ընտրանքի իրականացման համար տեղեկատվության աղբյուր է հանդիսացել քաղաքաշինության բնագավառում կառավարման պետական լիազորված մարմնի կողմից 2022 թվականին տրամադրված անհատական բնակարանային շինարարության թույլտվությունների ցանկը: Արդյունքում, հետազոտության մեջ ընդգրկվել են ք. Ստեփանակերտն ու բոլոր շրջանները: Դիտարկվել են նաև նոր կառուցվող բնակելի շենքերի ռեգիստրում նախորդ տարիներին հաշվառված և չավարտված անհատական բնակելի շենքերը:

Հետազոտության ընտրանքում ընդգրկված անհատական բնակելի շենքերի (ըստ անհատական բնակարանային շինարարության թույլտվությունների) համակցությունը կազմել է 162 միավոր, որի բաշխվածությունն ըստ շրջանների արտացոլված է ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 1. Հետազոտության մեջ ընդգրկված բնակելի շենքերն ըստ շրջանների

	Հետազոտության մեջ ընդգրկված բնակելի շենքերի քանակը, հատ	Տոկոսով՝ ընդամենի նկատմամբ
Ընդամենը	162	100,0
ք.Ստեփանակերտ	150	92,6
Ասկերան	1	0,6
Մարտակերտ	7	4,3
Մարտունի	4	2,5

Սույն հետազոտության իրականացման համար կիրառվել են վիճակագրական այնպիսի ստանդարտ գործիքներ, ինչպիսիք են ընտրանքի կազմակերպումը, ծրագրային ապահովումը և այլն:

4. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ

Անհատական բնակելի շենքերի (այսուհետ բնակելի շենքեր) վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրման աշխատանքների ողջ գործընթացն իրականացվել է հարցազրուցավարների կողմից, հարցումների միջոցով:

Մինչ այդ, ընտրանքային հետազոտության նախապատրաստման և անցկացման նպատակով իրականացվել են հարցազրուցավարների հրահանգավորման աշխատանքներ, նրանց են հանձնվել դիտարկման համար անհրաժեշտ հարցաթերթերը, լրացման հրահանգները, ինչպես նաև հետազոտվող բնակելի շենքերի ցուցակները:

Հրահանգավորման ընթացքում հարցազրուցավարներին պարզաբանումներ են տրվել հարցաթերթում ներառված ցուցանիշների լրացման, քաղաքացիների կողմից հարցաթերթի լրացմանը մասնակցելուց հրաժարվելու, ինչպես նաև այլ դեպքերի ժամանակ հարցաթերթի լրացման առանձնահատկությունների վերաբերյալ:

Հարկ է նշել, որ հետազոտության ընթացքում հարցաթերթերում զետեղված հարցերին մասնակիորեն պատասխանելու կամ այլ դեպքերը նվազագույնի հասցնելու նպատակով քաղաքացիներին տրվել են լրացուցիչ այլ պարզաբանումներ հետազոտության կարևորության մասին:

Տվյալների հավաքագրումն իրականացվել է ըստ շրջանների: Դաշտային աշխատանքների արդյունավետության ապահովման նպատակով՝ այդ աշխատանքները պարբերաբար վերահսկվել է ՀՈՒ Բաժնի կողմից:

Հետազոտության արդյունքների մուտքագրումն իրականացվել է համապատասխան ծրագրային ապահովման միջոցով, որի հիման վրա էլ կազմվել են ելքային աղյուսակները:

5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սույն հետազոտության ընթացքում տեղեկատվություն է հավաքագրվել 162 բնակելի շենքերի վերաբերյալ:

Այն տեղեկատվությունը, որը վերաբերվել է հետազոտված բնակելի շենքերի ընդհանուր բնութագրերին, վերլուծական իմաստով խմբավորվել է ըստ հետևյալ հատկանիշների.

- շինարարական աշխատանքների ընթացքը,
- դրանց պատրաստվածության աստիճանը,
- ֆինանսավորման աղբյուրները և կատարված ծախսերը,
- շենքերի հարկայնությունը,
- շենքերի տարածքների բարեկարգվածությունը,
- այլ օժանդակ շինությունների առկայությունը:

Շինարարության ոլորտի զարգացման տեսանկյունից թերևս կարևորագույն նախադրյալ է հանդիսանում բնակարանային շինարարության ընթացքը:

Ընդհանուր առմամբ, հետազոտված բնակելի շենքերի **շինարարական աշխատանքների ընթացքը** (հարցման ժամանակահատվածում) բնութագրվում է ստորև բերված աղյուսակի տվյալներով.

Աղյուսակ 2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքը շրջաններով

(հատ)

	Ընդամենը	այդթվում`	
		Ընթանում են շինարարական աշխատանքներ	Չեն ընթանում շինարարական աշխատանքներ
Ընդամենը	162	78	84
ք.Ստեփանակերտ	150	77	73
Ասկերան	1	-	1
Մարտակերտ	7	-	7
Մարտունի	4	1	3

Հետազոտված 162 բնակելի շենքերից միայն 78-ում կամ 48,1 տոկոսում են ընթանում շինարարական աշխատանքներ: Ընդ որում, նշված ցուցանիշն ըստ շրջանների ունի հետևյալ բաշխվածությունը. քաղաք Ստեփանակերտում` 51,3 տոկոս, Մարտունիում` 25,0:


Ըստ հետազոտության արդյունքների շինարարական աշխատանքներ չեն ընթացել 84 բնակելի շենքերում, որը կազմում է ընդամենի 51,9 տոկոսը (հավելված 1, աղյուսակ 1, 2, 3):

Վերը նշված աղյուսակի տվյալներով շինարարական աշխատանքների ընթացքի բացակայությունը պայմանավորված է, ինչպես շենքերի պատրաստվածության տարբեր աստիճաններում դրանց ժամանակավոր դադարեցմամբ, այնպես էլ ամբողջությամբ ավարտված կամ գործարկված լինելու հանգամանքով:

Հետազոտված բնակելի շենքերի շինարարական աշխատանքների ընթացքը բնութագրող ցուցանիշները շրջաններով արտացոլված է գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1. Շինարարական աշխատանքների ընթացքի ցուցանիշները, շրջաններով


(%)



Հատկանշական է, որ շինարարական աշխատանքներ են ընթանում մինչև 2013թ. շինարարության մեկնարկը տված բնակելի շենքերի 71,4 տոկոսում:

Գծապատկեր 2. Շինարարական աշխատանքների ընթացքն ըստ սկսելու ժամանակահատվածի, շրջաններով.

(%)



Հետազոտությամբ պարզվեց, որ բնակելի շենքերի վրա իրականացվող շինարարական աշխատանքները հիմնականում սկսվել են 2017-2019 թվականներին (46.3 տոկոս): Այդ մասին են վկայում ստորև բերված աղյուսակի տվյալները:

Աղյուսակ 3. Բնակելի շենքերը ըստ շինարարությունը սկսելու ժամանակահատվածի

(%)

	Ընդամենը	Այդ թվում՝							
		մինչև 2013թ.	2014-2016	2017-2018	2019	2020	2021	2022	Զի սկսվել
Ընդամենը	100,0	13,0	8,0	27,8	18,5	10,5	7,4	8,0	6,8
ք.Ստեփանակերտ	100,0	14,0	8,0	26,0	17,3	11,4	8,0	8,0	7,3
Ասկերան	100,0	-	-	-	100,0	-	-	-	-
Մարտակերտ	100,0	-	-	42,9	42,9	-	-	14,2	-
Մարտունի	100,0	-	25,0	75,0	-	-	-	-	-


2022թ. շինարարական աշխատանքներ են իրականացվել դիտարկվող ժամանակահատվածում ընդգրկված բնակելի անհատական շենքերի 61,5 տոկոսում միայն, ընդ որում՝ ք. Ստեփանակերտում այդ ցուցանիշը կազմել է 66,7 տոկոս, Ասկերանի, Մարտակերտի և Մարտունու շրջաններում 2022թ. շինարարական աշխատանքներ չեն իրականացվել:

Բնակելի շենքերն ըստ պատրաստվածության աստիճանի դիտարկելիս, որը չափազանց կարևոր է բնակելի շենքերի ռեգիստրի ձևավորման և շենքերի շինարարության հետագա ընթացքը վերահսկելու առումով, պարզվել է, որ գերակշռում են 100% պատրաստվածություն ունեցող շենքերը, որոնք կազմել են ընդամենի 33,1 տոկոսը: Հետազոտված շենքերի համակցությունում տեսակարար ավելի ցածր կշռով առանձնացվում են 81-99% և մինչև 20% պատրաստվածություն ունեցող շենքերը, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 4,0 տոկոս և 9,3

տոկոս: Բնակելի շենքերի պատրաստվածության աստիճանի նկարագիրը շրջանային կտրվածքով ներկայացված է հավելված 1, աղյուսակներ 9, 10, 11-ում:

Շենքերի պատրաստվածության աստիճանի բաշխումը շրջաններով արտացոլված է գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3. Շենքերի պատրաստվածության աստիճանի բաշխումը, շրջաններով




Գործարկված բնակելի շենքերի առավել բարձր տեսակարար կշիռն ընկնում է մինչև 2017-2018թ.թ. շինարարական աշխատանքները սկսած շենքերին 38,0 տոկոս (հավելված 1, աղյուսակ 13):

Ակնհայտ է, որ բնակարանային շինարարության համար պահանջվում են զգալի ներդրումներ և **ֆինանսական աղբյուրների** տեսակետից դիտարկման պարագայում, որպես այդպիսիք, ըստ հետազոտության տվյալների, հիմնականում առանձնացվել են բնակչության սեփական միջոցները և վարկերը: Ընդ որում, հարցումների արդյունքում պարզվել է, որ բնակելի շենքերի կառուցման վրա կատարված ծախսերի գերակշռող մասն իրականացվել է սեփական միջոցների հաշվին՝ 78,7 տոկոսը, իսկ պետական միջոցների հաշվին՝ 9,1 տոկոսը, որն արտացոլված է գծապատկեր 4-ում:

Գծապատկեր 4. Շենքերի շինարարությունը ըստ ֆինանսավորման աղբյուրների

(%)




Սույն ցուցանիշի դիտարկումը շրջանային բաշխվածության առումով հետևյալն է՝ ք.Ստեփանակերտում շինարարական աշխատանքների 77,6 տոկոսը կատարվել է ի հաշիվ սեփական միջոցների, 2,6 տոկոսը՝ վարկերի, Մարտունու շրջանում՝ 75,0 տոկոսը սեփական միջոցների հաշվին, 25,0 տոկոսը այլ միջոցների հաշվին: Իսկ Ասկերանի և Մարտակերտի շրջաններում շինարարական աշխատանքները ամբողջությամբ կատարվել են սեփական միջոցների հաշվին: Վարկերի և պետական միջոցների հաշվին շինարարություն իրականացվել է միայն ք. Ստեփանակերտում (հավելված 1, աղյուսակ 16):

Շենքերի շինարարության ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը շրջաններով արտացոլված է գծապատկեր 5-ում:

Գծապատկեր 5. Շենքերի շինարարությունն ըստ ֆինանսավորման աղբյուրների, շրջաններով

(%)



Ընդհանուր առմամբ, ըստ հետազոտության տվյալների բնակելի շենքերի վրա կատարված ծախսերը բնութագրվել են հետևյալ համամասնություններով. մինչև 5 մլն դրամ՝ 77,5 տոկոս, 5-15 մլն դրամ՝ 18,5 տոկոս, 15-30 մլն դրամ՝ 4,0 տոկոս (հավելված 1, աղյուսակներ 18, 19 և 20):

Համաձայն հետազոտության արդյունքների հիմնականում գերակշռել են մեկ և երկու հարկանի շենքերի շինարարությունը, համապատասխանաբար 60,9 և 35,1 տոկոս: Բնակելի շենքերի ընդհանուր բաշխվածությունն ըստ հարկերի արտացոլված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 4. Բնակելի շենքերի հարկայնության կառուցվածքը

(%)

	Ընդամենը	Այդ թվում՝		
		Մեկ հարկանի	Երկու հարկանի	Երեք հարկանի
Ընդամենը	100,0	60,9	35,1	4,0
ք.Ստեփանակերտ	100,0	60,4	35,3	4,3
Ասկերան	100,0	-	100,0	-
Մարտակերտ	100,0	71,4	28,6	-
Մարտունի	100,0	75,0	25,0	-


Հատկանշական է, որ եռահարկ բնակելի շենքեր արձանագրվել են միայն մայրաքաղաքում: Ք. Ստեփանակերտում, Մարտակերտի և Մարտունու շրջաններում գերակշռել են մեկ հարկանի բնակելի շենքերը, իսկ Ասկերանի շրջանում կառուցվող միակ բնակելի շենքը երկհարկանի է:

Ընդ որում, կիսակառույց շենքերի դիտարկման ժամանակ հարկայնությունը հաշվառվել է ըստ դրանց նախագծերով նախատեսվող չափորոշիչների:

Բնակելի շենքերի շրջանային բաշխվածությունն ըստ հարկերի արտացոլված է գծապատկեր 6-ում:

Գծապատկեր 6. Բնակելի շենքերի բաշխումն ըստ հարկերի, շրջաններով

(%)




Հետազոտության արդյունքներով պարզվեց, որ տարածքների բարեկարգման տեսանկյունից իրականացված հիմնական աշխատանքները հանդիսացել են շինարարական աղբի և բնահողի մաքրման և տարածքի հարթեցման աշխատանքները (հավելված 1, աղյուսակներ 24, 25 և 26): Հատկանշական է, որ կանաչապատման աշխատանքների իրականացվել են միայն ք. Ստեփանակերտում:

Ք. Ստեփանակերտի և Մարտակերտի շրջանի հետազոտված բնակելի շենքերի համապատասխանաբար 41.7 տոկոսը և 57.1 տոկոսը ունեն ավտոտնակ, իսկ Մարտակերտի և Մարտունու շրջանների բնակելի շենքերի համապատասխանաբար 28.6 տոկոսը և 25.0 տոկոսը ապահովված են լողավազանով: Ընդհանուր նկարագիրը շրջաններով արտացոլված է գծապատկեր 7-ում (հավելված 1, աղյուսակներ 27, 28 և 29):

Գծապատկեր 7. Բնակելի շենքերին կից օժանդակ շինությունների առկայությունը, շրջաններով

(%)



Ավտոտնակ ունենալու մասին նշել են հետազոտված բնակելի անհատական շենքերի տերերի 41,1 տոկոսը, լողավազանի մասին՝ 2,0 տոկոսը:

Հետազոտության արդյունքները ԱՀ ԱՎԾ-ին հնարավորություն տվեցին.

- բարձրացնել բնակելի շենքերի վերաբերյալ տեղեկատվության ամբողջականությունն ու որակը,
- համալրել պաշտոնական վիճակագրության շրջանակում բնակարանային շինարարության վերաբերյալ առկա տեղեկատվական բազան նոր ցուցանիշներով,
- ուսումնասիրել բնակարանային շինարարության շրջանային կառուցվածքը և ծավալները, ինչպես նաև դրանց առանձնահատկությունները,
- ձևավորել նոր կառուցվող շենքերի ռեգիստրը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

(ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐ)

Աղյուսակ 1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքը շրջաններով

(հաա)

	Ընդամենը	<i>Այդ թվում՝</i>	
		Ընթանում են շինարարական աշխատանքներ	Չեն ընթանում շինարարական աշխատանքներ
Ընդամենը	162	78	84
ք.Ստեփանակերտ	150	77	73
Ասկերան	1	-	1
Մարտակերտ	7	-	7
Մարտունի	4	1	3

Աղյուսակ 2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի կառուցվածքը, շրջաններով

(%)

	Ընդամենը	<i>Այդ թվում՝</i>	
		Ընթանում են շինարարական աշխատանքներ	Չեն ընթանում շինարարական աշխատանքներ
Ընդամենը	100,0	48,1	51,9
ք.Ստեփանակերտ	100,0	51,3	48,7
Ասկերան	100,0	-	100,0
Մարտակերտ	100,0	-	100,0
Մարտունի	100,0	25,0	75,0

Աղյուսակ 3. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի բաշխման կառուցվածքը, շրջաններով

(%)

	Ընդամենը	<i>Այդ թվում՝</i>	
		Ընթանում են շինարարական աշխատանքներ	Չեն ընթանում շինարարական աշխատանքներ
Ընդամենը	100,0	100,0	100,0
ք.Ստեփանակերտ	92,6	98,7	86,9
Ասկերան	0,6	-	1,2
Մարտակերտ	4,3	-	8,3
Մարտունի	2,5	1,3	3,6

Աղյուսակ 4. Բնակելի շենքերը ըստ շինարարությունը սկսելու ժամանակահատվածի

(հատ)

	Ընդամենը	Այդ թվում՝							
		մինչև 2013թ.	2014-2016	2017-2018	2019	2020	2021	2022	Չի սկսվել
Ընդամենը	162	21	13	45	30	17	12	13	11
ք.Ստեփանակերտ	150	21	12	39	26	17	12	12	11
Ասկերան	1	-	-	-	1	-	-	-	-
Մարտակերտ	7	-	-	3	3	-	-	1	-
Մարտունի	4	-	1	3	-	-	-	-	-

Աղյուսակ 5. Բնակելի շենքերը ըստ շինարարությունը սկսելու ժամանակահատվածի

(%)

	Ընդամենը	Այդ թվում՝							
		մինչև 2013թ.	2014-2016	2017-2018	2019	2020	2021	2022	Չի սկսվել
Ընդամենը	100,0	13,0	8,0	27,8	18,5	10,5	7,4	8,0	6,8
ք.Ստեփանակերտ	100,0	14,0	8,0	26,0	17,3	11,4	8,0	8,0	7,3
Ասկերան	100,0	-	-	-	100,0	-	-	-	-
Մարտակերտ	100,0	-	-	42,9	42,9	-	-	14,2	-
Մարտունի	100,0	-	25,0	75,0	-	-	-	-	-

Աղյուսակ 6. Բնակելի շենքերի շինարարությունը ըստ սկսելու ժամանակահատվածի

(%)

	Ընդամենը	Այդ թվում՝							
		մինչև 2013թ.	2014-2016	2017-2018	2019	2020	2021	2022	Չի սկսվել
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
ք.Ստեփանակերտ	92,6	100,0	92,3	86,6	86,7	100,0	100,0	92,3	100,0
Ասկերան	0,6	-	-	-	3,3	-	-	-	-
Մարտակերտ	4,3	-	-	6,7	10,0	-	-	7,7	-
Մարտունի	2,5	-	7,7	6,7	-	-	-	-	-

Աղյուսակ 7. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքն ըստ շինարարությունը սկսելու ժամանակահատվածի

(հատ)

	Ընդամենը	Այդ թվում՝							
		մինչև 2013թ.	2014-2016	2017-2018	2019	2020	2021	2022	Չի սկսվել
Ընդամենը	162	21	13	45	30	17	12	13	11
Ընթանում են շինարարական	78	15	8	16	12	11	8	8	-
Չեն ընթանում շինարարական	84	6	5	29	18	6	4	5	11
Ստեփանակերտ	150	21	12	39	26	17	12	12	11
Ընթանում են շինարարական	77	15	7	16	12	11	8	8	-
Չեն ընթանում շինարարական	73	6	5	23	14	6	4	4	11

	Ընդամենը	Այդ թվում՝						2022	Չի սկսվել
		մինչև 2013թ.	2014-2016	2017-2018	2019	2020	2021		
Ասկերան	1	-	-	-	1	-	-	-	-
Ընթանում են շինարարական	-	-	-	-	-	-	-	-	-
Չեն ընթանում շինարարական	1	-	-	-	1	-	-	-	-
Մարտակերտ	7	-	-	3	3	-	-	1	-
Ընթանում են շինարարական	-	-	-	-	-	-	-	-	-
Չեն ընթանում շինարարական	7	-	-	3	3	-	-	1	-
Մարտունի	4	-	1	3	-	-	-	-	-
Ընթանում են շինարարական	1	-	1	-	-	-	-	-	-
Չեն ընթանում շինարարական	3	-	-	3	-	-	-	-	-

Աղյուսակ 8. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի բաշխման կառուցվածքն ըստ շինարարությունը սկսելու ժամանակահատվածի

(%)

	Ընդամենը	Այդ թվում՝						2022	Չի սկսվել
		մինչև 2013թ.	2014-2016	2017-2018	2019	2020	2021		
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Ընթանում են շինարարական	48,1	71,4	61,5	35,6	40,0	64,7	66,7	61,5	-
Չեն ընթանում շինարարական	51,9	28,6	38,5	64,4	60,0	35,3	33,3	38,5	100,0
Ստեփանակերտ	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Ընթանում են շինարարական	51,3	71,4	58,3	41,0	46,2	64,7	66,7	66,7	-
Չեն ընթանում շինարարական	48,7	28,6	41,7	59,0	53,8	35,3	33,3	33,3	100,0
Ասկերան	100,0	-	-	-	100,0	-	-	-	-
Ընթանում են շինարարական	-	-	-	-	-	-	-	-	-
Չեն ընթանում շինարարական	100,0	-	-	-	100,0	-	-	-	-
Մարտակերտ	100,0	-	-	100,0	100,0	-	-	100,0	-
Ընթանում են շինարարական	-	-	-	-	-	-	-	-	-
Չեն ընթանում շինարարական	100,0	-	-	100,0	100,0	-	-	100,0	-
Մարտունի	100,0	-	100,0	100,0	-	-	-	-	-
Ընթանում են շինարարական	25,0	-	100,0	-	-	-	-	-	-
Չեն ընթանում շինարարական	75,0	-	-	100,0	-	-	-	-	-

Աղյուսակ 9. Բնակելի շենքերի պատրաստվածության աստիճանը

(հատ)

	Ընդամենը	Այդ թվում՝				
		մինչև 20%	21-50%	51-80%	81-99%	100%
Ընդամենը	151	14	36	45	6	50
ք.Ստեփանակերտ	139	14	35	39	3	48
Ասկերան	1	-	-	-	-	1
Մարտակերտ	7	-	1	4	2	-
Մարտունի	4	-	-	2	1	1

Աղյուսակ 10. Բնակելի շենքերի պատրաստվածության աստիճանի կառուցվածքը

(%)

	Ընդամենը	Այդ թվում՝				
		մինչև 20%	21-50%	51-80%	81-99%	100%
Ընդամենը	100,0	9,3	23,8	29,8	4,0	33,1
ք.Ստեփանակերտ	100,0	10,1	25,2	28,1	2,1	34,5
Ասկերան	100,0	-	-	-	-	100,0
Մարտակերտ	100,0	-	14,3	57,1	28,6	-
Մարտունի	100,0	-	-	50,0	25,0	25,0

Աղյուսակ 11. Բնակելի շենքերի պատրաստվածության աստիճանի բաշխման կառուցվածքը

(%)

	Ընդամենը	Այդ թվում՝				
		մինչև 20%	21-50%	51-80%	81-99%	100%
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
ք.Ստեփանակերտ	92,1	100,0	97,2	86,7	50,0	96,0
Ասկերան	0,7	-	-	-	-	2,0
Մարտակերտ	4,6	-	2,8	8,9	33,3	-
Մարտունի	2,6	-	-	4,4	16,7	2,0

Աղյուսակ 12. Բնակելի շենքերի պատրաստվածության աստիճանն ըստ շինարարությունը սկսելու ժամանակահատվածի

(հատ)

	Ընդամենը	Այդ թվում՝						
		մինչև 2013թ.	2014-2016	2017-2018	2019	2020	2021	2022
Ընդամենը	151	21	13	45	30	17	12	13
Այդ թվում ըստ պատրաստվածության՝								
մինչև 20%	14	2	1	3	-	1	2	5
21-50%	36	6	1	11	9	5	2	2
51-80%	45	8	7	9	7	7	4	3
81-99%	6	-	1	3	2	-	-	-
100%	50	5	3	19	12	4	4	3
այդ թվում՝								
Ստեփանակերտ	139	21	12	39	26	17	12	12
Այդ թվում ըստ պատրաստվածության՝								

	Ընդամենը	Այդ թվում՝						
		մինչև 2013թ.	2014-2016	2017-2018	2019	2020	2021	2022
մինչև20%	14	2	1	3		1	2	5
21-50%	35	6	1	11	8	5	2	2
51-80%	39	8	7	5	6	7	4	2
81-99%	3	-	-	2	1	-	-	-
100%	48	5	3	18	11	4	4	3
Ասկերան	1	-	-	-	1	-	-	-
Այդ թվում ըստ պատրաստվածության՝								
100%	1	-	-	-	1	-	-	-
Մարտակերտ	7	-	-	3	3	-	-	1
Այդ թվում ըստ պատրաստվածության՝								
21-50%	1	-	-		1	-	-	
51-80%	4	-	-	2	1	-	-	1
81-99%	2	-	-	1	1	-	-	
Մարտունի	4	-	1	3	-	-	-	-
Այդ թվում ըստ պատրաստվածության՝								
51-80%	2	-	-	2	-	-	-	-
81-99%	1	-	1	-	-	-	-	-
100%	1	-	-	1	-	-	-	-

Աղյուսակ 13. Բնակելի շենքերի պատրաստվածության աստիճանի կառուցվածքն ըստ շինարարությունը սկսելու ժամանակահատվածի

(%)

	Ընդամենը	Այդ թվում՝						
		մինչև 2013թ.	2014-2016	2017-2018	2019	2020	2021	2022
Ընդամենը	100,0	13,9	8,6	29,8	19,9	11,3	7,9	8,6
Այդ թվում ըստ պատրաստվածության՝								
մինչև20%	100,0	14,3	7,2	21,4	-	7,1	14,3	35,7
21-50%	100,0	16,7	2,8	30,6	25	13,9	5,5	5,5
51-80%	100,0	17,8	15,6	20,0	15,5	15,5	8,9	6,7
81-99%	100,0	-	16,7	50,0	33,3	-	-	-
100%	100,0	10,0	6,0	38,0	24	8,0	8,0	6,0
այդթվում՝								
Ստեփանակերտ	100,0	15,1	8,7	28,1	18,7	12,2	8,6	8,6
Այդ թվում ըստ պատրաստվածության՝								
մինչև20%	100,0	14,3	7,1	21,5	-	7,1	14,3	35,7
21-50%	100,0	17,1	2,9	31,4	22,9	14,3	5,7	5,7
51-80%	100,0	20,5	17,9	12,8	15,4	17,9	10,3	5,2
81-99%	100,0	-	-	66,7	33,3	-	-	-
100%	100,0	10,4	6,3	37,5	22,9	8,3	8,3	6,3
Ասկերան	100,0	-	-	-	100,0	-	-	-
Այդ թվում ըստ պատրաստվածության՝								

	Ընդամենը	Այդ թվում՝						2022
		մինչև 2013թ.	2014-2016	2017-2018	2019	2020	2021	
100%	100,0	-	-	-	100,0	-	-	-
Մարտակերտ	100,0	-	-	42,9	42,9	-	-	14,2
Այդ թվում ըստ պատրաստվածության՝								
21-50%	100,0	-	-	-	100,0	-	-	-
51-80%	100,0	-	-	50,0	25,0	-	-	25,0
81-99%	100,0	-	-	50,0	50,0	-	-	-
Մարտունի	100,0	-	25,0	75,0	-	-	-	-
Այդ թվում ըստ պատրաստվածության՝								
51-80%	100,0	-	-	100,0	-	-	-	-
81-99%	100,0	-	100,0	-	-	-	-	-
100%	100,0	-	-	100,0	-	-	-	-

Աղյուսակ 14. Բնակելի շենքերի պատրաստվածության աստիճանի բաշխման կառուցվածքն ըստ շինարարությունը սկսելու ժամանակահատվածի

(%)

	Ընդամենը	Այդ թվում՝						2022
		մինչև 2013թ.	2014-2016	2017-2018	2019	2020	2021	
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Այդ թվում ըստ պատրաստվածության՝								
մինչև 20%	9,3	9,5	7,7	6,7	-	5,9	16,7	38,4
21-50%	23,8	28,6	7,7	24,4	30,0	29,4	16,7	15,4
51-80%	29,8	38,1	53,8	20,0	23,3	41,2	33,3	23,1
81-99%	4,0	-	7,7	6,7	6,7	-	-	-
100%	33,1	23,8	23,1	42,2	40,0	23,5	33,3	23,1
այդ թվում՝								
Ստեփանակերտ	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Այդ թվում ըստ պատրաստվածության՝								
մինչև 20%	10,1	9,5	8,3	7,7	-	5,9	16,7	41,6
21-50%	25,2	28,6	8,3	28,2	30,8	29,4	16,7	16,7
51-80%	28,0	38,1	58,4	12,8	23,1	41,2	33,3	16,7
81-99%	2,2	-	-	5,1	3,8	-	-	-
100%	34,5	23,8	25,0	46,2	42,3	23,5	33,3	25,0
Ասկերան	-	-	-	-	100,0	-	-	-
Այդ թվում ըստ պատրաստվածության՝								
100%	-	-	-	-	100,0	-	-	-
Մարտակերտ	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Այդ թվում ըստ պատրաստվածության՝								
21-50%	14,3	-	-	-	33,3	-	-	-
51-80%	57,1	-	-	66,7	33,3	-	-	100,0
81-99%	28,6	-	-	33,3	33,3	-	-	-

	Ընդամենը	Այդ թվում՝						2022
		մինչև 2013թ.	2014-2016	2017-2018	2019	2020	2021	
Մարտունի	100,0	-	100,0	100,0	-	-	-	-
Այդ թվում ըստ պատրաստվածության՝								
51-80%	50,0	-	-	66,7	-	-	-	-
81-99%	25,0	-	100,0	-	-	-	-	-
100%	25,0	-	-	33,3	-	-	-	-

Աղյուսակ 15. Բնակելի շենքերի շինարարության ֆինանսավորման աղբյուրները

(հատ)

	Ընդամենը	Այդ թվում ի հաշիվ՝			
		վարկերի	սեփական միջոցների	պետական	այլ
Ընդամենը	164	4	129	15	16
ք.Ստեփանակերտ	152	4	118	15	15
Ասկերան	1	-	1	-	-
Մարտակերտ	7	-	7	-	-
Մարտունի	4	-	3	-	1

Աղյուսակ 16. Բնակելի շենքերի շինարարության ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը

(%)

	Ընդամենը	Այդ թվում ի հաշիվ՝			
		վարկերի	սեփական միջոցների	պետական	այլ
Ընդամենը	100,0	2,4	78,7	9,1	9,8
ք.Ստեփանակերտ	100,0	2,6	77,6	9,9	9,9
Ասկերան	100,0	-	100,0	-	-
Մարտակերտ	100,0	-	100,0	-	-
Մարտունի	100,0	-	75,0	-	25,0

Աղյուսակ 17. Բնակելի շենքերի շինարարության ֆինանսավորման աղբյուրների բաշխման կառուցվածքը

(%)

	Ընդամենը	Այդ թվում ի հաշիվ՝			
		վարկերի	սեփական միջոցների	պետական	այլ
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0
ք.Ստեփանակերտ	92,7	100,0	91,5	100,0	93,8
Ասկերան	0,6	-	0,8	-	-
Մարտակերտ	4,3	-	5,4	-	-
Մարտունի	2,4	-	2,3	-	6,2

Աղյուսակ 18. Բնակելի շենքերի շինարարության վրա կատարված ֆինանսական ծախսերը
(հատ)

	Ընդամենը	Այդ թվում՝		
		մինչև 5մլն դրամ	5-15 մլն դրամ	15-30 մլն դրամ
Ընդամենը	151	117	28	6
ք.Ստեփանակերտ	139	107	27	5
Ասկերան	1	-	-	1
Մարտակերտ	7	7	-	-
Մարտունի	4	3	1	-

Աղյուսակ 19. Բնակելի շենքերի կառուցվածքն ըստ շինարարության վրա կատարված ֆինանսական ծախսերի
(%)

	Ընդամենը	Այդ թվում՝		
		մինչև 5մլն դրամ	5-15 մլն դրամ	15-30 մլն դրամ
Ընդամենը	100,0	77,5	18,5	4,0
ք.Ստեփանակերտ	100,0	77,0	19,4	3,6
Ասկերան	100,0	-	-	100,0
Մարտակերտ	100,0	100,0	-	-
Մարտունի	100,0	75,0	25,0	-

Աղյուսակ 20. Բնակելի շենքերի բաշխման կառուցվածքն ըստ շինարարության վրա կատարված ֆինանսական ծախսերի
(%)

	Ընդամենը	Այդ թվում՝		
		մինչև 5մլն դրամ	5-15 մլն դրամ	15-30 մլն դրամ
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0
ք.Ստեփանակերտ	92,1	91,4	96,4	83,3
Ասկերան	0,7	-	-	16,7
Մարտակերտ	4,6	6,0	-	-
Մարտունի	2,6	2,6	3,6	-

Աղյուսակ 21. Բնակելի շենքերի հարկայնությունը
(հատ)

	Ընդամենը	Այդ թվում՝		
		Մեկ հարկանի	Երկու հարկանի	Երեք հարկանի
Ընդամենը	151	92	53	6
ք.Ստեփանակերտ	139	84	49	6
Ասկերան	1	-	1	-
Մարտակերտ	7	5	2	-
Մարտունի	4	3	1	-

Աղյուսակ 22. Բնակելի շենքերի հարկայնության կառուցվածքը

(%)

	Ընդամենը	Այդ թվում՝		
		Մեկ հարկանի	Երկու հարկանի	Երեք հարկանի
Ընդամենը	100,0	60,9	35,1	4,0
ք.Ստեփանակերտ	100,0	60,4	35,3	4,3
Ասկերան	100,0	-	100,0	-
Մարտակերտ	100,0	71,4	28,6	-
Մարտունի	100,0	75,0	25,0	-

Աղյուսակ 23. Բնակելի շենքերի հարկայնության բաշխման կառուցվածքը

(%)

	Ընդամենը	Այդ թվում՝		
		Մեկ հարկանի	Երկու հարկանի	Երեք հարկանի
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0
ք.Ստեփանակերտ	92,1	91,3	92,4	100,0
Ասկերան	0,7	-	1,9	-
Մարտակերտ	4,6	5,4	3,8	-
Մարտունի	2,6	3,3	1,9	-

Աղյուսակ 24. Բնակելի շենքերի տարածքների բարեկարգման աշխատանքները

(հատ)

	Ընդամենը	Այդ թվում՝		
		Մաքրում շինարարական աղբից և բնահողի մաքրում	Տարածքի հարթեցում	Կանաչապատում
Ընդամենը	151	14	134	3
Ստեփանակերտ	139	9	127	3
Ասկերան	1	-	1	-
Մարտակերտ	7	4	3	-
Մարտունի	4	1	3	-

Աղյուսակ 25. Բնակելի շենքերի տարածքների բարեկարգման աշխատանքների կառուցվածքը (%)

	Ընդամենը	Այդ թվում՝		
		Մաքրում շինարարական աղբից և բնահողի մաքրում	Տարածքի հարթեցում	Կանաչապատում
Ընդամենը	100,0	9,3	88,7	2,0
Ստեփանակերտ	100,0	6,5	91,4	2,1
Ասկերան	100,0	-	100,0	-
Մարտակերտ	100,0	57,1	42,9	-
Մարտունի	100,0	25,0	75,0	-

Աղյուսակ 26. Բնակելի շենքերի տարածքների բարեկարգման աշխատանքների բաշխման կառուցվածքը (%)

	Ընդամենը	Այդ թվում՝		
		Մաքրում շինարարական աղբից և բնահողի մաքրում	Տարածքի հարթեցում	կանաչապատում
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0
Ստեփանակերտ	92,1	64,3	94,8	100,0
Ասկերան	0,7	-	0,8	-
Մարտակերտ	4,6	28,6	2,2	-
Մարտունի	2,6	7,1	2,2	-

Աղյուսակ 27. Բնակելի շենքերին կից օժանդակ շինությունների առկայությունը

(հատ)

	Ընդամենը	Այդ թվում՝		
		ավտոտնակ	լողավազան	այլ
Ընդամենը	66	62	3	1
Ստեփանակերտ	59	58	-	1
Ասկերան	-	-	-	-
Մարտակերտ	6	4	2	-
Մարտունի	1	-	1	-

Աղյուսակ 28. Բնակելի շենքերին կից օժանդակ շինությունների առկայության կառուցվածքը

(%)

	Ընդամենը	Այդ թվում՝		
		ավտոտնակ	լողավազան	այլ
Ընդամենը	100,0	93,9	4,6	1,5
Ստեփանակերտ	100,0	98,3	-	1,7
Ասկերան	-	-	-	-
Մարտակերտ	100,0	66,7	33,3	-
Մարտունի	100,0	-	100,0	-

Աղյուսակ 29. Բնակելի շենքերին կից օժանդակ շինությունների առկայության բաշխման կառուցվածքը

(%)

		Այդ թվում՝		
		ավտոտնակ	լողավազան	այլ
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0
Ստեփանակերտ	89,4	93,5	-	100,0
Ասկերան	-	-	-	-
Մարտակերտ	9,1	6,5	66,7	-
Մարտունի	1,5	-	33,3	-